

3K33  
U-85

1165

G<sub>A</sub> 32-11  
2

B. U S U. L P W

ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՃԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

(Ը 6կ. Ստալինի հառը՝  
«նետսավարեների խորհրդակցությանը»)

Института  
Биологии  
Академии Наук  
СССР



ԽՈՀՄ ՖԱԴՎԱՐԻ, ԿԵՆՏՐՈՆ, ՀՐԱՄԱՆԱԳՅՈՒՆ

Gesetz

Digitized by srujanika@gmail.com

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՌՈՍՏՈՎԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Ա. Անդրեյևի.—Սոցիալիստական շինարարության նոր համարը	6
2. Կուրեյկո.—Կուլտոզի թշնամի	3
3. Դյուլատնտեսական կոմունայի կանոնադրություն	2
4. Սօալին.—Գառասիսան ընկեր կոլխոզնիկներին	3
5. Մ. Դիգոյան.—Կոլխոզների մասնին	5
6. Վ. Խվանովի.—Նոր ետապում	5
7. Դյուլատնտեսական արտելի կանոնադրություն	2
8. Կոնջ աշխատանքը Կոլխոզում	5
9. Ա. Անդրեյևի.—Հյուս, Կովկ. դյուլատնտեսության սոցվերակառուցման խնդիրները	2
10. Կալին.՝Խնդիրները կազմակերպել և վարել կաթնատնտեսությունը Կոլխոզներում	8
11. Ա. Անդր.- Սոցիալիստական շինարարության գոտում	8
12. Հյուս, Կովկ. Երեկո. ծխախոտագրաժական միության դիմումը	2
13. ՀԿ(բ) հենտկոմի աշխատանքը (ընկ. Վորոշիլովի զիկուցումը)	15
14. Ա. Հովհաննիսան.՝ Երեք մարտական փոքրի (բանաստեղություններ)	20
15. Հյուս, Կովկ. Երեկոյին 6 կուսկոնֆերենցիայի բանաձեռները	8
16. Զարգացրեք կենդանաբուծությունը կոլխոզներում	8
17. Ցեղասպացորենի կուլտուրան 2. կ.	6
18. Միքայելյան.՝ Դնելու նոր կինցաղը Կոլխոզներում	5
19. Սկսմուրօխան.՝ Պաշտպաննեցք անսաւոններին վարակումից	5
20. Դրագովսկի.՝ Առաջին ոգուն թյուն հիվանդացած պյուղ. Կենդանիներին	6
21. Հնգամակի Երերորդ տարվա շեմքին	16
22. Դյուլատնտեսական միասնական հարկը և գ. ա. սոց. վերակառուցումը	10
23. Ա. Ա. Մեղվեդյուկ.՝ Հացահատիկների բերքահավաքը և կալսը	3
24. Միխիլյան Բանջարանոցային կուլտուրաների խնամքը	8
25. Պ. Մ. Յանսոն Արտադրական խորհրդակցությունները կուլտուրանում	12
26. Ա. Բանտանջյան.՝ Առանձնաբուժական կոլխոզի և նրա մասնաճյուղերի կառավարումը	20
27. Ա. Մենարդե.՝ Առուրդական վերընտրությունների հիմնական խնդիրները	7
28. Խորհուրդների վերընտրությունների գործնական խնդիրները	8
29. Ամրապնդիք Խորհուրդները (պիեսա)	10
30. Խաւինով.՝ Կուլտուրան մասնաճյուղումը և խորհուրդների խնդիրները	7

2010

ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ՃԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐ

(Ընկ. Սօալինի նառը՝ Տնտեսակարների  
խորհրդակցությանը 1931 թ. հունիսի 1-ին)

Հնկերներ, խորհրդակցության նյութերից յերեվում և, վոր պլանի կատարման տեսակետից մեր արդյունաբերությունը բավական խայտարդետ պատկեր է ներկայացնում: Կան արդյունաբերության ճյուղեր, վորոնք անցած հինգ ամսվա լնիտացքում անցյալ տարվա համեմատությամբ տվել են արտադրանքի աճ 40—50 տոկոսով: Կան ճյուղեր, վորոնք 20—30 տոկոսից ավելի աճ չեն տվել, վերջապես, կան արդյունաբերական առանձին ճյուղեր, վորոնք տվել են չնչին աճ—հավիվ 6—10 տոկոս, գուցե և ավելի պակաս: Վերջինների թվին են պատկանում քարածուխիք արդյունաբերությունը և սկ մետաղագործությունը: Պատկերն, ինչպես տեսնում եք, խայտաբղետ եւ ինչով բացատրել այդ խայտաբղետությունը: Ի՞նչն է արդյունաբերության վորոշ ճյուղերի յետամասցւթյան պատճառը: Վերն և այն բանի պատճառը, վերն այն բանի պատճառը, վորոշ ճյուղերը տալիս են ընդդամենը 20—25 տոկոս աճ, իսկ քարածուխիք

յունաբերությունը և սև մետաղագործությունը տակած են ել ավելի պակաս աճ և քաշ են զալիս մյուս ճյուղերի պահից։ Պատճառն այն է, վոր վերջերս արդյունաբերության զարգացման պայմաններն արմատապես փոխվել են։ Ստեղծվել են նոր պայմաններ, վորոնք պահանջում են զեկավարության նոր ձևեր, իսկ մեր զեկավարներից վորմանք փոխանակ փոխելու աշխատանքի ձևերը, զեր ելի շարունակում են հինգ ձևերով աշխատել։ Ուրեմն, խնդիրը նրանումն է, վոր արդյունաբերության զարգացման նոր պայմանները պահանջում են նոր ձևի աշխատանք, իսկ մեր արնեսավարներից վորմանք չեն հասկանում այդ, չեն ուսումնամ, վոր այժմ պետք է նոր ձևով դեկամառեւ։

Սրա մեջ ե կայանում մեր արդյունաբերության  
վորոշ ճյուղերի յետամասցության պատճառը։ Վո-  
րոշ են մեր արդյունաբերության զարգացման այդ  
նոր պայմանները։ Վարտեղից առաջ յեկան նրանք:  
Դրանք, այդ նոր պայմաններն առնվազն Ե-Ն են:

Քննենք այդ պայմանները։

## **1. ԲԱՆԳՈՐԱԿԱՆ ՈՒԺԸ**

Խոսքը վերաբերում է ամենից առաջ ձեռնարկությունները բանվորական ուժով ապահովելուն։ Առաջ բանվորները սովորաբար իրենք եյին գնում գործարանները և ֆաբրիկաները, ուրեմն այդ գործում փորոշ ինքնահոս կար։ Խոկ ինքնահոսը բղխում եր այն բանից, վարդործազրկություն կար, գյուղի շերտավորում ենք, աղքամություն կար, սովոր յերկուղ կար, արդ մարդկանց պայողից քաղաքներն եր

քշում: Հիշում եք այս փորմուլան—«մուժիկի փախուստը գյուղից քաղաք»: Ի՞նչն եր ստիպում գյուղացուն գյուղից քաղաք փախչել: Սովոր յերկյուղը, զործազբկությունը, այն հանդամանքը, վոր գյուղը նրա համար խորթ մայր եր: Նա պատրաստ եր փախչելու այնտեղից ուր ասես, միայն թե վորևե աշխատանք ստանար: Այսպես, կամ զրեթե այսպես եր դրությունը մոտ անցյալում:


կարելի՞ յե արդյոք ասել, վոր մենք այժմ  
նույնպիսի պատկեր ունենք, Վոչ, այդ չի կարելի  
ասել: Ընդհակառակը, այժմ պայմաններն արմատա-  
պես փոխվել են: Յեկ հենց այն պատճառով, վոր  
պայմանները փոխվել են, մենք այլևս չունենք բան-  
վորական ուժի ինքնահոս: Իսկ այս ժամանակամի-  
ջոցում իսկապես ի՞նչն ե փոխվել:

Մենք նախ և առաջ վերացրինք գործազրկությունը, ուրեմն վոչնչացրինք այն ուժը, վորը ճռշցում եր գործում աշխատանքի շուկայի վրա:

Յերկրորդ՝ մենք արմատապես խախտեցինք դյու-  
ղի շերտավորումը, հետևաբար հաղթահարեցինք հենց  
այն մասսայական աղքատությունը, վորը գյուղացուն  
դյուղից քաղաք եր քշում:

Վերջապես, մենք գյուղին տվինք տասնյակ հազարավոր տրակտորներ, գյուղատնտեսական մեքենաներ, ջախջախեցինք կուլակին, կազմակերպեցինք կուլողներ և գյուղացուն հնարավորություն տվինք մարդու պես ապրելու և աշխատելու:

Հիմա գյուղն այլև գյուղացու համար չի կարելի խորթ մայր համարելու Յեկ հենց այն պատճա-



36033-66

ոով, վոր գյուղն այլևս խորթ մայր անվանել չի կարելի, գյուղացին սկսեց մնալ գյուղում, մեղնում այլևս չկա վոչ «ուժիկի փախուստը զյուղից քաղաք», վոչ ել բանվորական ուժի ինքնահոս։ Դուք տեսնում եք, վոր մենք այժմ բոլորովին նոր պայմաններ ունենք, ձեռնարկությունները բանվորական ուժով ապահովելու նոր պայմաններ։ Իսկ ի՞նչ ե այստեղից հետեւում։

Այստեղից հետեւում ե նախ և առաջ այն, վոր բանվորական ուժի ինքնահոսի վրա այլևս չի կարելի հույս դնել նշանակում ե ինքնահոսի «քաղաքականությունից» պետք ե անցնել արդյունաբերության համար հարկավոր բանվորների կազմակերպված ընդունման քաղաքականությանը։ Բայց դրա համար գոյություն ունի մի ճանապարհ—դա տնտեսական կազմակերպությունների և կոլխոզների ու կոլխոզնիկների միջև կնքվող պայմանագրերի ճանապարհն է։ Դուք գիտեք, վոր այդ ճանապարհի վրա յեն արդեն կանգնած մի քանի տնտեսական կազմակերպություններ և կոլխոզներ և փորձը ցույց տվեց, վոր պայմանագրերի պրակտիկան լուրջ աջողություններ ե տակի թե կոլխոզների և թե արդյունաբերական ձեռնարկությունների համար։

Այստեղից հետեւում ե, յերկրորդ, այն, վոր հարկավոր ե անմիջապես անցնել աշխատանքի ամենածանր պրոցեսների մեջենայացմանը, ամեն կերպ ծավալելով այդ գործը (փայտի արդյունաբերությունը, շինարարական գործը, քարածուխային արդյունաբերությունը, բարձումները, դատարկումները, տրանսպորտը, ու մետաղագործությունը և այլն)։ Իհարկե,

դա չի նշանակում, վոր իբր թե հարկավոր ե դեն շպրտել ձեռքի աշխատանքը։ Ընդհակառակը, ձեռքի աշխատանքն արտադրության մեջ դեռ շատ յերկար ժամանակ ամենալուրջ դեր ե խաղալու, Բայց դա նշանակում ե, վոր աշխատանքի պրոցեսների մեջենայացումը մեզ համար այն վճռական ուժն ե, առանց վորի անհնար և պահպանել վոչ մեր տեմպերը, վոչ ել արտադրության նոր ծավալները։

Մեզանում դեռ եմ քիչ չեն ախպիսի տնտեսավարները, վորոնք «չեն հավատում» վոչ մեխանիզացիյին, վոչ ել կոլխոզների հետ կնքվող պայմանագրերին։ Դրանք հենց այն տնտեսավարներն են, վորոնք չեն հասկանում նոր պայմանները, չեն ուզում աշխատել նոր ձևով, այս են քաշում «հին, լավ ժամանակների համար», յերբ բանվորական ուժը «ինքն եր գալիս» ձեռնարկությունները։ Ել ի՞նչ ասել կուզի, վոր նման տնտեսավարները, ինչպես յերկինքն ե յերկից հեռու, այնպես ել նրանք հեռու յեն տնտեսական շինարարության այն նոր ինդիքներից, վոր տակիս են մեզ նոր պայմանները։ Ինչպես յերկում ե, նրանք կարծում են, թե բանվորական ուժի դժվարությունները պատահական յերևությ են, վոր բանվորական ուժի պակասն ինքն իրեն կանհայտանա, այսպես ասած՝ ինքնահոսի կարգով։

Դա թյուրիմացություն ե, ընկերներ։ Բանվորական ուժի դժվարություններն իրենք չեն կարող անհայտանալ։ Նրանք կարող են անհայտանալ միայն մեր սեփական ջանքերի հետեանքով։ Այսպես, ուրեմն, բանվորական ուժն ընդունել կազմակերպված ձևով, կոլխոզների հետ պայմանագրեր կնքելով և մե-

քենայացնելով աշխատանքը, —սա յե խնդիրը։ Այսպես ե դրված մեր արդյունաբերության զարգացման նոր պայմանի առաջին հարցը։

Անցնենք յերկրորդ պայմանի հարցին։

## 2. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Յես հենց նոր խոսեցի մեր ձեռնարկությունների բանվորների կազմակերպված ընդունման մասին։ Բայց բանվորների ընդունելը դեռ ևս չի նշանակում կատարել ամբողջ գործը։ Վորպեսզի մեր ձեռնարկություններն ապահովենք բանվորական ուժով, անհրաժեշտ ե աշխատել, վոր բանվորներն ամրացվեն արտադրության մեջ և ձեռնարկության բանվորների կազմը դարձնել քիչ թե շատ մշտական։ Հազվագի թե կարելի լինի ապացուցել, վոր առանց բանվորների մշտական կազմի, վորոնք քիչ թե շատ յուրացըել են արտադրության տեխնիկան և սովորել են նոր մեխանիզմներին, առանց այդ բանվորների չի կարելի առաջ շարժվել, անկարելի յե կատարել արտադրական պլանները։

Հակառակ դեպքում ստիպված կլինեցինք ամեն անդամ բանվորներին նորից սովորեցնել և ժամանակի կեսը վատնել նրանց սովորեցնելու վրա, փոխանակել ոգտագործելու այդ ժամանակն արտադրության համար։ Իսկ այժմ գործնականում ի՞նչ ե կատարվում մեղանում։ Կարելի՞ յե արդյոք ասել, վոր ձեռնարկություններում բանվորների կազմը քիչ թե շատ մշտական եւ Դժբախտաբար, այդ չի կարելի ասել ընդհակառակը, մեր ձեռնարկություններում դեռ ելի

կա այսպես կոչված՝ բանվորական ուժի հոսունությունը։ Ավելին՝ մի շաբաթունություններում բանվորական ուժի հոսունությունը վոչ միայն չի անհայտանում, այլ ընդհակառակը, աճում և ուժեղանում ե։ Համենայն գեպս դուք քիչ ձեռնարկություններ կգտնեք, վորտեղ բանվորների կազմը կետարփա, կամ նույնիսկ կվարտալի ընթացքում առնըվագն 30—70 տոկոսով փոխվելիս չկինի։ Առաջ, արդյունաբերության վելականգնման ժամանակաշրջանում, յերբ մեր տեխնիկական սարքավորումը չնշին եր և արտադրության ծավալը փոքր, կարելի յեր մի կերպ տանել բանվորական ուժի այսպես կոչված՝ հոսունությունը։ Այժմ ուրիշ բան ե, այժմ պայմաններն արմատապես փոխվել են։ Այժմ, ծավալուն վերօնկառուցման ժամանակաշրջանում, յերբ արտադրության ծավալները հսկայական են դարձել, իսկ տեխնիկական սարքավորումը չափազանց բարդ, բանվորական ուժի հոսունությունը դարձել ե արտադրության պատուհանը, վորը քայլայում ե մեր ձեռնարկությունները։ Այժմ «տանել» բանվորական ուժի հոսունությունը — դա նշանակում ե քայլայել մեր արդյունաբերությունը, վոչնչացնել արտադրական պլանների կատարման հնարավորությունը, խախտել արտադրանքի վորակը բարելավելու հնարավորությունը։

Ի՞նչ ե բանվորական ուժի հոսունության պատճառը։ Աշխատավարձի սխալ կազմակերպումը, սխալ տարիքային սխառեմը և «ձախլիկ» հավասարեցումն աշխատավարձի բնադրավառում։

Մի շաբաթ ձեռնարկություններում տարիքային

գրույքները սահմանված են այնպես, վոր ծանր աշխատանքի և թեթև աշխատանքի տարբերությունը դրեթե վոչնչանում եւ Հավասարեցման պատճառով վոչ վորակյալ բանվորը շահագրգռված չե վորակյալ դառնալու և այդպիսով զրկված ե առաջ շարժվելու հեռանկարից, ուստի նա իրեն «ամառանոցավոր ե զգում արտադրության մեջ» և աշխատում ե ժամանակավորապես միայն նրա համար, վոր «մի քիչ փող աշխատի» և հետո ուրիշ տեղ գնա բախտ վորոնելու։ Հավասարեցման հետեւանքով վորակյալ բանվորը ստիպված ե ձեռնարկությունից ձեռնարկություն գնալու, վորպեսզի վերջապես, մի այնպիսի ձեռնարկություն գտնի, վորտեղ կարող են պատշաճ կերպով գնահատել վորակյալ աշխատանքը։ Այստեղից ել առաջ ե գալիս ձեռնարկությունից ձեռնարկություն անցնող «ընդհանուր» շարժումը և բանվորական ուժի հոսունությունը։

Վորպեսզի վոչնչայնենք այդ չարիքը, հարկավոր ե վերացնել հավասարեցումը, հարկավոր ե կազմակերպել տարիքների այնպիսի սիստեմ, վորը հաշվի առներ վորակյալ աշխատանքի և վոչ վորակյալ աշխատանքի տարբերությունը, ծանր աշխատանքի և թեթև աշխատանքի տարբերությունը։ Զի կարելի հանգուրժել, վորպեսզի սև մետաղագործության մեջ հարթողը նույնքան ստանա, վորքան ավլողը։ Զի կարելի հանդուրժել, վոր յերկաթուղային տրանսպորտում մեքենավարը ստանա նույնքան, վորքան ստանում ե արտադրողը։

Մարքսը և Լենինն ասում են, վոր վորակյալ և վոչ վորակյալ աշխատանքի տարբերությունը գոյու-

թյուն կունենա նույնիսկ սոցիալիզմի ժամանակի նույնիսկ դասակարգերը վոչնչացնելուց հետո և վոր այդ տարբերությունը պետք ե անհայտանա միայն կոմունիզմի ժամանակ, վոր այդ պատճառով «աշխատավարձը» նույնիսկ սոցիալիզմի ժամանակ պետք ե տրվի ըստ աշխատանքի և վոչ ըստ կարիքի։

Բայց մեր տնտեսավար և պրոֆմիութենական հավասարեցնողները համաձայն չեն այդ բանի հետ և կարծում են, վոր տարբերությունն արդեն անհայտացել ե մեր խորհրդային իրավակարգում։ Ո՞վ ե իրավացին—Մարքսն ու Լենինը, թե՝ հավասարեցնողները։ Պետք ե կարծել, վոր այժմ ով տարիֆային սիստեմի կողմանից ե՝ հավասարեցման «սկզբունքներով», առանց հաշվի առնելու վորակյալ աշխատանքի և վոչ վորակյալ աշխատանքի տարբերությունը, նա հեռանում է մարքսիզմից և լենինիզմից։

Արդյունաբերության յուրաքանչյուր ճյուղում, ամեն մի ձեռնարկության մեջ և ամեն մի ցեխում կան քիչ թե շատ վորակյալ բանվորների ղեկավար խմբակներ, վորոնց ամենից առաջ և գլխավորապես հարկավոր ե ամրացնել արտադրության մեջ, յեթե մենք իսկապես ուղղում ենք ապահովել ձեռնարկության բանվորների մշտական կազմը։ Նրանք, բանվորների այդ ղեկավար խմբակները, կազմում են արտադրության հիմնական ողակը։ Ամրացնել նրանց արտադրության մեջ և ցեխում—դա նշանակում է ամրացնել բանվորների ամբողջ կազմը, արմատապես վոչնչացնել բանվորական ուժի հոսունությունը։

Իսկ նրանց ի՞նչպես ամրացնել ձեռնարկության մեջ, նրանց կարելի յե ամրացնել միմիայն ավելի

բարձր առաջ քաշելով, բարձրացնելով նրանց աշխատավարձի մակարդակը, աշխատավարձն այնպես կազմակերպելով, վոր աշխատավորի վորակը պատշաճ գնահատում ստանա:

Իսկ ի՞նչ ե նշանակում առաջ քաշել բարձրացնել նրանց աշխատավարձի մակարդակը: Դա նշանակում ե հեռանկար բաց անել վոչ վորակյալ բանվորների համար, ազդակ հանդիսանալ նրանց առաջ քաշվելու, վորակյաների շարքը դասվելու համար: Դուք ի՞նքներդ գիտեք, վոր այժմ մեզ հարկավոր են հարցուր հազարավոր և միլիոնավոր վորակյալ բանվորներ: Բայց, վորպեսզի ստեղծենք վորակյալ բանվորներ, հարկավոր և ազդակ հանդիսանալ, հեռանկար տալ անվարժ բանվորներին առաջ շարժվելու և առաջ քաշվելու համար: Յեվ վորքան մենք ավելի համարձակ կերպով կանգնենք այդ ճանապարհի վրա, այնքան ավելի լավ ե, վորովհետև այդ ե հիմնական միջոցը բանվորական ուժի հոսունությունը վերացնելու համար:

Իսկ այս գործում տնտեսելը չարագործություն անել ե նշանակում, նշանակում ե գնալ մեր սոցիալիստական արդյունաբերության շահերի գեմ:

Բանվորներին ձեռնարկության մեջ ամրացնելու համար սա բոլորը չեն: Անհրաժեշտ ե դարձյալ բանվորների մատակարարման և բնակարանային պայմանների հետագա բարելավումը: Զի կարելի բացասեր վոր բանվորների բնակարանային շնարարության և մատակարարման բնագավառում վերջին տարիներու շատ բան ե արվել: Բայց այն, ինչ արվել ե, միանգամայն անբավարար ե, յեթե ուզում ենք ծած-

կել բանվորների արագ աճող կարիքները: Զի կարելի շեշտել այն բանը, թե առաջ ավելի քիչ բնակարան ե յեղեք քան արժմ, վոր այդ պատճառով կարելի է հանգստանալ ձեռք բերված արդյունքներով: Զի կարելի նաև շեշտել այն, վոր առաջ բանվորների մատակարարումը շատ ավելի վատ ե յեղեք, քան արժմ, վոր այդ պատճառով կարելի յե բավականանալ գոյություն ունեցող դրությամբ:

Միայն փոտած և ամբողջովին հոտած մարդեկ կարող են միխթարվել անցյալով: Պետք ե յելնել վոչ թե անցյալից, այլ բանվորների ներկա աճող կարիքներից: Պետք ե հասկանալ, վոր մեզ մոտ բանվորների գոյության պայմաննեցն արմատակես փոխվել են: Բանվորն այժմ այն չե, ինչ առաջ եր: Այժմյան մեր խորհրդային բանվորն ուղում ե ապրել իր բոլոր նյութական և կուլտուրական կարիքներով մթերքների մատակարարման տեսակետից, բնակարանի տեսակետից, իր կուլտուրական և ուրիշ ամեն տեսակ կարիքներն ապահովելու կողմից: Նա իրավունք ունի և մենք պարտավոր ենք ապահովելու այդ պայմանները:

Ճիշտ ե, նա չի տառապում գործազրկությունից, նա ազատ ե կապիտալիզմի լծից, նա այլևս ստրուկ չե, այլ իր գործի տերը: Բայց զա բավական չե: Նա պահանջում է տպահովել իր բոլոր նյութական և կուլտուրական կարիքները և մենք պարտավոր ենք կատարել նրա այդ պահանջը: Զմոռանաք, վոր մենք այժմ ինքներս ենք վորոշ պահանջներ առաջադրում բանվորին. նրանից պահանջում ենք աշխատանքային կարգապահություն, լարված աշխատանք, սոցմրցակ-

ցություն և հարվածայնություն։ Զմոռանաք, վոր  
բանվորների խողոր մեծամասնությունը խորհրդային  
իշխանության այդ պահանջներն ընդունեց մեծ վո-  
գեսրությամբ և կատարում ե հերոսությամբ։ Ուստի,  
չզարմանաք, վոր բանվորներն իրադորձելով խորհը-  
դային իշխանության պահանջները, իրենց հերթին  
խորհրդային իշխանությունից կպահանջեն պարտա-  
փորությունների կատարում բանվորների նյութական  
և կուլտուրական դրության հետագա բարելավման  
գործում։

Այսպես, ուրեմն, վերացնել բանվորական ուժի հոսունությունը, վոչնչացնել հավասարեցումը, ճիշտ կազմակերպել աշխատավարձը և բարելավել բանվորների կենցաղային պայմանները — սա յե խնդիրը։ Այսպես ե մեր արդյունաբերության զարգացման յերկրորդ նոր պայմանի հարցի դրությունը։

Անդնենք լերըորդ պայմանի հարցին:

### **3. ԱՃԻԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

Յես վերևում խոսեցի բանվորական ուժի հօսու-  
նության լիկվիդացիայի անհրաժեշտության մասին,  
բանվորներին ձեռնարկություններին ամրացնելու մա-  
սին։ Բայց բանվորների ամրացումով ամբողջ հարցը  
չի սպառվում։ Հոսունության վոչնչացնելը հերիք  
չե։ Հարկավոր ե բանվորներին ել գնել աշխատանքի  
այնպիսի պայմանների մեջ, վորոնք հնարավորու-  
թյուն տան նրանց աշխատելու ինչպես հարկն ե,  
բարձրացնելու արտադրողականությունը և բարելա-  
վելու արտադրանքի վորակը։ Ուրեմն՝ հարկավոր ե

աշխատանքը ձեռնարկություններում այնպես կազմակերպել, վորպեսզի արտադրողականությունը բարձրանա ամսեամիս, կվարտավիզ կվարտալ:

Կարելի՞ յե արդյոք ասել, թե աշխատանքի այժմյան կազմակերպումը մեր ձեռնարկություններում համապատասխան ե արտադրության ժամանակակից պայմաններին։ Դժբախտաբար, այդ չի կարելի ասել։ Համենայն գեպս, մեզանում դեռ ելլի կան մի շարք ձեռնարկություններ, վորտեղ աշխատանքի կազմակերպումը իմաստ վատ ե դրված, վորտեղ կարդու կանոնի և աշխատանքը համաձայնեցնելու փոխարեն տեսնում ենք անկարգություն և շփոթություն, վորտեղ աշխատանքի պատասխանատվության փոխառնեառում է փակագուար ռենտացիա թւունու,

Սա հանձնարարված աշխատանքի համար պահանջող պատասխանատվության բացակայությունն է, մեխանիզմի, գաղղակի և գործիքների համար սահմանված պատասխանատվության բացակայությունը: Հասկանալի յեւ, վորդի մազը կության ժամանակ խոսք անդամ չի կարող լինել աշխատանքի արտադրողականության քիչ թե շատ լուրջ վերելքի, արտադրանքի վորակի բարելավման, մեխանիզմներին, դադայաներին և գործիքներին ինսամքով վերաբեր-վելու մասին: Դուք գիտեք, թե ինչ առաջացրեց դիմաց մազը կությանը յերկաթուղային տրանսպորտում: Նույն արդյունքներն եւ ստեղծում դիմացը կությունն արդյունաբերության մեջ: Մենք դիմաց մազը կությունը վոչնչացրինք յերկաթուղային տրանսպորտում և բարձրացրինք նրա աշխա-

տանքը։ Արդյունաբերության մեջ մենք նույնն ենք անելու, վորպեսզի արդյունաբերության աշխատանքը գնենք ամենաբարձր աստիճանի վրա։

Առաջ մի կերպ կարելի յեր «յոլա գնալ» աշխատանքի այն սխալ կազմակերպումով, վորը կարողանում է կենակցել դիմացը կության և տվյալ կոնկրետ աշխատանքի համար ամեն մեջի ունենալիք պատասխանատվության բացակայության հետ։ Այժմ ուրիշ բան եւ Այժմ պայմանները բոլորովին ուրիշ են։ Արտադրության այժմյան հոկածավաների ժամանակ, հոկա ձեռնարկությունների գոյության ժամանակ դիմացը կության մեջ մի այնպիսի պատուհաս ե, վորը սպառնալիք է ստեղծում մեր բոլոր արտադրական և կազմակերպչական նվաճումների համար՝ ձեռնարկություններում։

Մեզ մոտ դիմացը կությունն ի՞նչպես կարողացավ արմատանալ մի շարք ձեռնարկություններում։ Նա յեկավ ձեռնարկությունների մեջ իբրև անընդհատականի անորեն ուղեկցուին։

Սխալ կլիներ ասել, թե անընդհականն արտադրության մեջ անպայման դիմազրկություն է առաջ բերում։ Աշխատանքը ճիշտ կազմակերպելու դեպքում, վորոշ աշխատանքի համար յուրաքանչյուրի պատասխանատվությունը կազմակերպելու, բանվորների վորոշ խմբակներին մեխանիզմներին, դադարաներին ամրացնելու, հերթերը ճիշտ կազմակերպելու դեպքում, — վորոնք իրարուց պակաս չեն ըստ վորակի և կվալի-

ֆիկացիայի, — այս պայմաններում անընդհատականը տանում է դեպի աշխատանքի արտադրողականության հսկայական աճումը, դեպի աշխատանքի վորակի բարեկավումը, դիմազրկության արմատահանումը։

Եյոպես ե, որինակ, զրությունը յերկաթուղային տրանսպորտում, վորտեղ այժմ անընդհատականը գոյություն ունի, բայց վարտեղ այլևս դիմազրկություն չկա։ Կարելի՞ յեւ արդյոք ասել, վոր արդյունաբերության ձեռնարկություններում մենք անընդհատականի նման նպաստավոր պատկեր ունենք։ Դժբախտաբար, այդ չի կարելի ասել։ Խնդիրն այն ե, վոր մեր մի շարք ձեռնարկությունները խիստ ուշ անցան անընդհատականին՝ առանց նախապատրաստվելու, առանց համապատասխան պայմանների, առանց հերթափոխությունների պատշաճ կազմակերպման, հերթափոխություններ, վորոնք վորակով և հատկությամբ քիչ թե շատ հավասարապես են, առանց կազմակերպելու ամեն մեկի պատասխանատվությունը տվյալ կոնկրետ աշխատանքի համար։ Իսկ այդ բանն առաջ բերեց այն, վոր անընդհատականը, տարերքի կամքին թողնված, դիմազրկության վերածվեց։ Դրա հետևանքով մի շարք ձեռնարկություններում մենք ունենք անընդհական թղթի վրա ու խոսքով և դիմազրկություն վոչ թե թղթի վրա, այլ գործով։ Դրա հետևանքով բացակայում է աշխատանքի պատասխանատվության զարգացումը, անփույթ վերաբերմունք և ցուց արրվում մեխանիզմներին, մասսայորեն ջարգվաւմ են դագդյանները, բացակայում է աշխատանքի արտադրողականության բարձրացման խթանը։ Բանվոր-

ները զուր չեն ասում. «Մենք կարող ենք բարձրաց-նել աշխատանքի արտադրողականությունը և բարելավել գործը, սակայն ո՞վ ե մեզ գնահատողը, յերբ վոչ վոք պատասխանառու չի զգում իրեն»։ Այստեղոց հետևում ե, վոր մեր ընկերներից վոմանք վորոշ տեղերում շուտ են անցել անընդհատականին և շտապելով, աղավաղել են անընդհականը, վերածելով այն դիմազրկության։

Սյդ դրությունը վերացնելու և դիմազրկությունը վոչնչացնելու համար յերկու յելք կա. կամ փոխել անընդհատականի գործադրման պայմաններն այնպես, վոր անընդհականը դիմազրկության չվերածվի, այնպես, ինչպես այդ արեցին, յերկաթուղային տրանսպորտի վերաբերմամբ։

Կամ այնտեղ, վորտեղ այդ փորձի համար այժմ նպաստավոր պայմաններ չկան, դեն շաբատել թղթի անընդհականը և ժամանակավորապես անցնել 6-որյա ընդհատականին, ինչպես այդ վերջերս արեց Ստալինգրադի տրակտորային գործարանը, նախապատրաստել պայմաններ, վորպեսզի հետո վերադառնալ իսկական և վոչ թե թղթի անընդհատականին, վերադառնալ անընդհատականին առանց դիմազրկության։ Ուրիշ յելք չկա։ Կասկած չի կարող լինել, վոր մեր տնտեսավարներն այդ բոլորը բավական լավ են հասկանում։ Բայց նրանք լուսում են։ Ինչո՞ւ վորովիետես, ինչպես յերեսում ե, ճշմարտությունից վախենում են։

Բայց բոլշևիկներն այդ վո՞ր ժամանակից են սկսել վախենալ ճշմարտությունից։ Մի՞թե ճիշտ չե, վոր մի շարք ճեռնարկություններում անընդհականը

դիմազրկության և վերածվել, վոր անընդհականն այսպիսով վերին աստիճանի աղավաղվել ե։ Հարց ե ծագում, — ո՞ւմ ե հարկավոր այդ անընդհատականը։ Հարց ե ծագում — ո՞վ կհամարձակվի ասել, վոր աղավաղված թղթե անընդհատականի պահպանման շահերն աշխատանքի ճիշտ կազմակերպման շահերից ավելի բարձր են, աշխատանքի արտադրողականության զարգացման շահերից ավելի բարձր, իսկական անընդհականի շահերից ավելի բարձր, մեր սոցիալիստական արդյունաբերության շահերից ավելի բարձր։ Պարզ չե՝ արդյոք, վոր վորքան շուտ թաղենք թղթե անընդհատականը, այնքան ավելի շուտ կկազմակերպենք իսկական, վոչ թղթե անընդհատականը։

Ընկերներից վոմանը կարծում են, վոր դիմազրկությունը կարելի յե վոչնչացնել խոսքերով և լայնահաղորդ ճառերով։ Համեմայն դեպս յես գիտեմ մի շարք տնտեսավարներ, վորոնք դիմազրկության դեմ իրենց մղած պայքարում սահմանափակվում են նրանով, վոր հանդես են գալիս ժողովներում դիմագրկության հասցեյին լոկ անեծքներով, կարծելով, ըստ յերևույթին, թե դիմագրկությունն այդպիսի ճառերից հետո պետք ե անհայտանա, այսպես ասած, ինքնահօսի կարգով։

Նրանք խորը թյուրիմացության մեջ են, յեթե կարծում են, թե դիմագրկությունը մեր պրակտիկայից կարելի յե վտարել ճառերով և խոսքերով։ Վոչ, ընկերներ, դիմագրկությունն ինքնաբերաբար և յերբեք չի անհայտանա։ Միայն մենք ինքնեռու կարող ենք ապետի և վոչնչացնենք

նրան, վորովհետև մենք ենք իշխանության տերը։ Մենք ձեղ հետ միասին պատասխանատու յենք ամեն ինչի, այդ թվում նաև գիմազը կության համար։ Յես կարծում եմ, վոր ավելի լավ կլիներ, յեթե մեր տնտեսական զեկավարները փոխանակ ճառերով և խոսքով զբաղվելու, նստելին մի յերկու ամիս, ասենք, հանքահորում, կամ գործարանում, ուստժնասիրեցին աշխատանքի կազմակերպման բոլոր մանրամասնությունները և «մանրունքները», վոչընչացնելին այստեղ գիմազը կությունը գործնականում և ապա տվյալ ձեռնարկության փորձը տանելին մյուս ձեռնարկությունները։ Դա շատ ավեմի լավ կլիներ։ Դա իսկապես կլիներ պայքար անտնտեսվարության դեմ, պայքար հանուն աշխատանքի ճիշտ բոլշեկույն կազմակերպման, պայքար ձեռնարկության մեջ ուժերը ճիշտ դասավորելու համար։

Ուրեմն այսպես, վերացնել անտնտեսվարությունը, բարեկավել աշխատանքի կազմակերպումը, ճիշտ գասավորել ուժերը ձեռնարկության մեջ,—սա յեխնդիրը։ Այսպես ե մեր արդյունաբերության զարգացման նոր, յերրորդ պայմանի հարցի դրությունը։ Անցնենք չոր որդ պայմանի հարցին։

#### 4. ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆ-ՑԻԱՅԻ ՀԱՐՑԸ

Պայմանները փոխվել են նաև արդյունաբերության հրամանատարական կազմի վերաբերմամբ ընդհանրապես և ինժեներա-տեխնիկական պերսոնալի

վերաբերմամբ՝ մասնավորապես։ Առաջ մեզնում գործի դրությունն այսպես եր, վոր մեր ամբողջ արդյունաբերության համար հիմնական աղբյուր ծառայում եր ուկրաինական քարածիսա-մետաղագործական բազան։

Ուկրաինան մետաղ եր մատակարարում մեր բոլոր արդյունաբերական ույսոններին, ինչպես հարավին, այսպես և Մոսկվային ու Լենինգրադին։ Նա յերքարածուխ մատակարարում ԽՍՀՄ-ի մեր հիմնական ձեռնարկություններին։ Յես այստեղ չեմ հիշատակում Ուրալը, վորովհետեւ Ուրալի տեսակարար կղիուր Դոնբասի համեմատությամբ աննշան մեծություն եր ներկայացնում։ Դրա համեմատ, արդյունաբերության հրամանատարական կազմ արտադրելու համար, մենք ունելինք, յերեք հիմնական կենտրոն—հարավը, Մոսկվայի ույսոնը և Լենինգրադի ույսոնը։ Հասկանալի յե, վոր իրերի նման դրության ժամանակ մենք այսպես թե անպես կարող ելինք բավականանալ ինժեներատեխնիկական ուժերի այն մինիմումով, վոր այն ժամանակ ուներ մեր յերկիրը։

Այսպես եր մոտ անցյալում։ Բայց այժմ մենք միանգամայն ուրիշ պայմաններ ունենք։ Այժմ յես կարծում եմ, պարզ ե, վոր պահելով զարգացման այժմյան տեմպերը և արտադրության հսկայական ծավալները, մենք արդեն չենք կարողանում բավականանալ միմիայն ուկրաինական քարածիսա-մետաղագործական բազայով։ Դուք գիտեք, վոր մեզ համար արդեն քիչ ե ուկրաինական քարածուխը և մետաղը, չնայած նրանց արտադրության աճին։ Դուք գիտեք, վոր մենք այդ պատճառով հարկադրված ե-

յինք ստեղծել նոր քարածխա - մետաղագործական բազա արևելքում - Ուրալ - կուղբասը: Դուք գիտեք, վոր մենք աջողությամբ ստեղծում ենք այդ բազան:

Բայց դա քիչ ե: Մենք պետք ե մետաղագործությունը ստեղծենք նաև Սիբիրում, նրա աճող կարիքները բավարարելու համար: Մենք այդ արդեն ստեղծում ենք: Բացի այդ, մենք պետք ե ստեղծենք գունավոր մետաղագործության նոր բազա կազակստանում և Թուրքեստանում: Վերջապես՝ մենք պետք ե զարգացնենք ամենալայն յերկաթուղային շնարարությունը: Դա հարկավոր ե ամբողջ Խորհրդային Միության և հեռավոր հանրապետությունների շահերի համար, ինչպես նաև կենտրոնի շահերի համար:

Բայց այստեղից հետևում ե, վոր մենք այլև շենք կարող բավականանալ արդյունաբերության մեջ ինժեներատ-տեխնիկական հրամանատարական ուժերի այն մինչիմումով, վորով մենք բավարարվում եյինք:

Այստեղից հետևում ե, վոր ինժեներա-տեխնիկական ուժերի ձևակերպման հին կենտրոններն արդեն անբավարար են, վոր անհրաժեշտ ե ստեղծել նոր կենտրոնների մի ամբողջ ցանց Ուրալում, Սիբիրում և Միջին Ասիայում: Այժմ մենք պետք ե մեղ յեռապատիկ և հնգապատիկ ավելի ապահովենք արդյունաբերության հարկավոր ինժեներա-տեխնիկական հրամանատարական ուժերով, յեթե մենք իսկապես մտադիր ենք իրականացնել Խորհրդային Միության սոցիալիստական ինդուստրացման ծրագիրը: Բայց մեզ հարկավոր են վոչ ամեն տեսակ հրամանատարական ենժեներա-տեխնիկական ուժերու: Մեռ

հարկավոր են այնպիսի հրամանատարական ինժեներա-տեխնիկական ուժեր, վորոնք ընդունակ են հասկանալու մեր յերկրի բանվոր դասակարգի քաղաքականությունը, ընդունակ են յուրացնելու այդ քաղաքականությունը և պատրաստ են իրենց կամքով իրադորձելու այդ քաղաքականությունը:

Իսկ այդ ինչ ե նշանակում: Դա նշանակում ե, վոր մեր յերկերը մտել ե իր զարգացման այնպիսի փուլի մեջ, յերբ բանվոր դասակարգը պետք ե ստեղծի իր սեփական արտադրական-տեխնիկական ինժենիգենցիան, վորն ընդունակ լինի պաշտպանելու նրա շահերն արտադրության մեջ իրեն իշխող դասակարգի շահերը: Իշխող վոչ մի դասակարգ չի կարողացել իշխել առանց իր սեփական ինտելիգենցիայի: Վոչ մի հիմք չկա կասկածելու, վոր բանվոր դասակարգն ևս չի կարող մնալ առանց իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի: Խորհրդային իշխանությունը հաշվի յե առել այդ հանգամանքը և բանվոր դասակարգի մարդկանց համար բաց ե արել բարձրագույն դպրոցների դռները՝ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում: Դուք գիտեք, վոր այժմ տասնյակ հազարավոր բանվոր և գյուղացի յերիտասարդներ սովորում են բարձրագույն դպրոցներում: Յեթե անցյալում, կապիտալիզմի ժամանակ բարձրագույն դպրոցները բանվորների համար չեյին, այժմ, խորհրդային իրավակարգում բանվորա-գյուղացիական յերիտասարդությունն իշխող ուժ ե կաղմում այնտեղ: Կասկածից դուրս ե, վոր մենք շուտով մեր դպրոցներից կստանանք հազարավոր նոր տեխ-

Նիկներ, ինժեներներ և նոր հրամանատարներ մեր  
արդյունաբերության համար:

Բայց սա խնդրի մի կողմն ե միայն: Խնդրի  
մյուս կողմը կայանում ե նրանում, վոր բանվոր դա-  
սակարգի արտադրական - տեխնիկական ինտելիգեն-  
ցիան կազմվելու յե վոչ միայն բարձրագույն դրպ-  
րոցն անցած մարդկանցից, —այլ և ինտելիգենցիան  
կազմվելու յե մեր ձեռնարկությունների գործ-  
նական աշխատափորներից, բանվոր դասակարգի կուլ-  
տուրական ուժերից և վորակյալ բանվորներից, գոր-  
ծարանից, Փաբրիկայից և հանքահորերից: Մրցակ-  
ցության նախաձեռնողները, հարվածային բրիգադ-  
ների ղեկավարները, աշխատանքային վերելքի գործ-  
նական ներշնչողները և շինարարության այս կամ  
այն տեղամասերում աշխատանքներ կազմակերպող-  
ները, —ահա բանվոր դասակարգի նոր խավը, վորը  
բարձրագույն դպրոցն անցած ընկերների հետ միա-  
սին կազմելու յե բանվոր դասակարգի ինտելիգեն-  
ցիայի միջուկը: Խնդրին այն ե, վոր անուշադիր չը-  
թողնենք այդ նախաձեռնող ընկերներին, ավելի հա-  
մարձակ կերպով առաջ քաշենք նրանց հրամանատա-  
րական պաշտոններում, հնարավորություն տանք նը-  
րանց ցույց տալ իրենց կազմակերպչական ընդունա-  
կությունները, հնարավորություն տանք նրանց լրա-  
ցնելու իրենց գիտելիքները և ստեղծենք նրանց հա-  
մար համապատասխան պայմաններ, վոր շմանայելով  
այդ գործի համար:

Այդ ընկերների մեջ բիչ չի անկուսակցականնե-  
րի թիվը: Բայց դա չի կարող արգելք հանդիսանալ,  
վոր նրանց ավելի համարձակ առաջ քաշենք ղեկա-

վար պաշտոններում: Ընդհակառակը, հենց նրանց,  
այդ անկուսակցական ընկերներին պետք ե շրջապա-  
տել հատուկ ուշադրությամբ և հարկավոր ե առաջ  
քաշել հրամանատարական պաշտոններում, վորպեսզի  
նրանք գործով համոզվին, վոր կուսակցությունը գի-  
տե գնահատել ընդունակ և տաղանդավոր աշխատա-  
փորներին: Ընկերներից վոմանք կարծում են, վոր  
Փաբրիկաներում և գործարաններում ղեկավար պաշ-  
տոններում կարելի յե առաջ քաշել միմիայն կու-  
սակցական ընկերների:

Այդ հիման վրա հաճախ նրանք անուշադրու-  
թյան են մատնում ընդունակ և նախաձեռնող ան-  
կուսակցական ընկերներին, առաջին տեղը տալով  
թեկուզ ավելի պակաս ընդունակ և նախաձեռնու-  
թյունից զուրկ կուսակցականների: Ինչ ասել կուզի,  
վոր այդ, թող ներփի մեզ ասելու, «Քաղաքականու-  
թյունից» ավելի հիմար և ավելի ռեակցիոն բան չկա:  
չազիվ թե ապացուցելու կարիք լինի, վոր նման  
«Քաղաքականությամբ» կարելի յե միայն վարկա-  
բեկել կուսակցությունը և վանել կուսակցությու-  
նից անկուսակցական բանվորներին: Մեր քաղաքա-  
կանությունը բոլորովին նրա մեջ չի կայանում, վոր  
կուսակցությունը դարձնենք մի փակված կաստա:  
Մեր քաղաքականությունը կայանում ե նրանում,  
վոր կուսակցական և անկուսակցական բանվորների  
միջև գոյություն ունենա «փոխադարձ վստահու-  
թյան» մթնոլորտ: Մեր կուսակցությունն ուժեղ ե բանվոր  
դասակարգի մեջ ի միջի այլոց նրանով, վոր նա հենց  
այդպիսի քաղաքականություն ե անցկացնում:

Այսպես ուրեմն, աշխատել, վոր Խորհրդային Միության բանվոր դասակարգն ունենա իր սեփական արտադրական տեխնիկական ինտելիգենցիան, —սա յէ խնդիրը: Այսպես և մեր արդյունաբերության զարգացման նոր, չորորդ պայմանի հարցի դրությունը:  
Անցնենք հինգերորդ պայմանի հարցին:

## 5. ՇՐՋԱԴՐՁԻ ՆՇԱՆՆԵՐԸ ՀԻԿԱՐԴՅՈՒՆԱԿԱՆ-ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ՄԵՋ

Հարցն այլ կերպ և դրվում նաև հին բուրժուական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիայի վերաբերմամբ: Յերկու տարի առաջ մեզնում դրությունն այնպես եր, վոր հին տեխնիկական ինտելիգենցիայի ամենավորակյալ մասը վարակված եր մասարարության ախտով:

Ավելին՝ այն ժամանակ մասարարությունը մի տեսակ մոդա յեր հանդիսանում, վումանք մասարարությամբ եյին պարապում, մյուսները պաշտպանում եյին մասարաններին, մի քանիսները ձեռքերը լվանում և չեղոքություն եյին պահպանում, վումանք ել տատանվում եյին. ինտելիգենցիայի մի մասը միայն շարունակում եր քիչ թե շատ լոյալ աշխատանքը: Բայց այստեղ խոսվում ե վոչ թե մեծամասնության, այլ տեխնիկական ինտելիգենցիայի ամենավորակյանների մասին:

Ինչից ստեղծվեց մասարարական շարժումը. ինչն եր նրան մնունդ տալիս, Դասակարգային պարարի սրումը Խորհրդային Միության ներսում, խոր-

հրդային իշխանության հարձակողական քաղաքականությունը քաղաքի կապիտալիստական տարրերի վերաբերմամբ, այս վերջինների զիմաղրությունը խորհրդային իշխանության քաղաքականությանը, միջազգային դրության բարդությունը, կոլխոզային և սովորացային շինարարության դժվարությունները: Յեթե մասարարների մարտական մասի ակտիվությունն ամրանում եր կապիտալիստական յերկրների իմպերիալիստների ինտերվենցիոնիստական մտադրություններով և հացի դժվարություններով յերկրի ներսում, տեխնիկական ինտելիգենցիայի մյուս մասի տատանումներն, ակտիվ մասարարների կողմը՝ ուժեղանում եյին տրոցկիստական մենշևիյան զատարկաբանների մոդա դարձած խոսակցություններով, թե միևնույնն ե՝ կոլխոզներից և սովորացայից վոչինչ չի դուրս գալու, «Խորհրդային իշխանությունը միևնույնն ե, այլասերվում ե և մոտակայում պետք ե ընկնի», «բոլցեկները իրենց քաղաքականությամբ հենց իրենք են նպաստում ինտերվենցիային» և այլն և այլն:

Բացի այդ, յեթե նույնիսկ աջ ուկոնիստների թվին պատկանող մի քանի հին բոլցեկներ «քամուն» չղիմացան և այդ շրջանում յերեսները շրջեցին կուսակցությունից, զարմանալու հիմք չկա, վոր հին տեխնիկական ինտելիգենցիայի վորոշ մասը, վորը բոլցեկների հոտը յերբեք չի առել, նույնպես տատանվեց աստծո ոգնությամբ:

Հասկանայի յե, վոր իրերի նման դրության ժամանակ, խորհրդային իշխանությունը կարող եր գործադրել հին տեխնիկական ինտելիգենցիայի վերա-

բերմամբ միայն մի քաղաքականություն—ակտիվ մսասատուներին վոչնչացնելու, չեղոքներին շերտափորելու և լոյալներին ներդրավելու քաղաքականությունը։ Այդպես եր մի յերկու տարի առաջ։

Կարելի՞ յէ արդիոք ասեր թե մենք այժմ ճիշտ նույն պայմաններն ունենք։ Վոչ, այդ չի կարելի ասեր։ Ընդհակառակը, այժմ մեզնում բոլորովին ուրիշ պայմաններ են։ Ծկսենք այն բանից, վոր մենք ջարդել ենք և աջողությամբ հաղթահարում ենք քաղաքի ու գյուղի կապիտալիստական տարրերին։ Իհարկե, դա չի կարող ուրախացնել հին ինտելիգենցիային։ Շատ հավանական է, վոր նրանք դեռ ելի ցավակցություն են հայտնում իրենց ջարդված բարեկամներին։ Բայց այնպես չի լինում, վոր համակրողները և մասնավանդ չեղոքներն ու տատանվողները կամագոր կերպով համաձայնվեն բաժանելու իրենց ակտիվ բարեկամների բախտն այն բոլորից հետո, յերբ այս վերջինները կատաղի և անուղղելի պարտություն կրեցին։ Այսուհետև մենք հաղթահարեցինք հացի դըժվարությունները և վոչ միայն հաղթահարեցինք, այլ և արտասահման ենք տանում հացի այնպիսի քանակություն, վորը խորհրդացին իշխանության գոյության ընթացքում դեռ չենք տարել։ Հետևաբար վերացվում ե տատանվողների այդ «պատճառաբանությունը»։ Այժմ նույնիսկ կույրերն ել են տեսնում, վոր մենք կոլխոզային և սովխոզային շինարարության բնագավառում վորոշակի հաղթահանակեցինք, մեծագույն աջողություններ ունենալով։ Ուրեմն՝ հին ինտելիգենցիայի «գինանոցի» ամենազլխափորն անդունդն ե ընկեր։ Ինչ վերաբերում ե բուրժուական

ինտելիգենցիայի ինտերվենցիոնիստական հույսերին, պետք է խոստովանվել, վոր սրանք առնվազն ավագի վրա կառուցված տնակ են յեղել։

Գործնականում վեց տարի ինտերվենցիա ելին խոստանում և վոչ մի անգամ չփորձեցին ինտերվենցիան։ Ժամանակ է խոստովանվելու, վոր մեր հեռատես բուրժուական ինտելիգենցիային ուղղակի քթից բռնած ման են ածել։ Յեռ դեռ չեմ խոսում այն մասին, վոր ակտիվ կամարաների վարչագիծը Մոսկվայի հայտնի դատավարությունը պետք ե պատկաղեղծ աներ և իսկապես պատկաղերծ արեց մնասարարության դադախարը։ Հասկանալի յէ, վոր այդ նոր հանգամանքները չելին կարող ազդեցություն չգործել մեր հին տեխնիկական ինտելիգենցիայի վրա։ Նոր պայմանները պետք ե ստեղծելին հին տեխնիկական ինտելիգենցիայի մեջ նոր տրամադրություններ և իսկապես ստեղծեցին։ Սրանով ե իսկապես բացատրվում այն փաստը, վոր մենք ունենք շրջադիր վորոշ նշաններ այդ ինտելիգենցիայի վորոշ մասի կողմից, վորն առաջ համակրում եր մնասարարներին, իսկ այժմ հակվում ե խորհրդացին իշխանության կողմը, Այն փաստը, վոր վոչ միայն հին ինտելիգենցիայի այդ խավը, այլև վորոշ յերեկվա մնասարարներ, յերեկվա մնասարարների դգալի մասը սկսում ե աշխատել բանվոր դասակարգի հետ միասին մի շարք ֆարբիկաներում և գործարաններում, այդ փաստն անկասկած ցույց ե տալիս, վոր հին տեխնիկական ինտելիգենցիայի շրջադարձն արդեն սկսվել ե։

Սա չի նշանակում, իհարկե, վոր մեզանում այլ-

ևս վնասարարներ չկան: Վոչ, չի նշանակում: Վնասարարներ կան և կլինեն, քանի դեռ կան դասակարգեր, քանի դեռ կա կապիտալիստական շրջապատը: Բայց դա նշանակում ե, վոր քանի վոր հին տեխնիկական ինտելիգենցիայի զգալի մասը, վորն առաջ այսպես թե այսպես համակրում եր մնասարարներին, այժմ շրջել ե իր յերեսը խորհրդային իշխանության կողմը, ակտիվ վնասարարների փոքրիկ թիվ ե մնացել, նրանք մեկուսացվել են և նրանք ժամանակավորապես պետք ե խորը պողպոլիայի մեջ մտնեն:

Բայց այստեղից հետեւում ե, վոր դրա համեմատ պետք ե փոխվի մեր քաղաքականությունը հին տեխնիկական ինտելիգենցիայի վերաբերմամբ: Յեթե մնասարարության յեռուղեռի ժամանակաշրջանում մեր վերաբերմունքը դեպի հին տեխնիկական ինտելիգենցիան արտահայտվում եր գլխավորապես ավերման քաղաքականությամբ, այժմ, ինտելիգենցիայի խորհրդային իշխանության կողմն անցնելու ժամանակաշրջանում, մեր վերաբերմունքը դեպի նա պետք ե արտահայտվի գլխավորապես ներդրավման և նրա մասին հոգալու քաղաքականությամբ: Ախալ և վոչ դիակեկտիկորեն կլիներ շարունակել հին քաղաքականությունը նոր, փոխված պայմաններում:

Հիմարություն և անհիմաստություն կլիներ այժմ նայել հին դպրոցի ամեն մի մասնագետի և ինժեների վրա իբրև չբռնված վորճրագործի և մնասարարի վրա: «Սպեցակերությունը» մեզանում միշտ համարվել ե և համարվում ե մնասակար և խայտառակ յերեռություն:

Սյդպես ուրեմն, փոխել մեր վերաբերմունքը

դեպի հին դպրոցի ինժեներա-տեխնիկական ույժերը, ցույց տալ նրանց ամենամեծ ուշադրություն և հոգատարություն, ավելի համարձակ կերպով աշխատանքի ներգրավել նրանց, — այս և խնդիրը: Այսպես ե մեր արդյունաբերության զարգացման նոր հինգերորդ պայմանի հարցի դրությունը: Անցնենք վերացն պայմանի հարցին:

## 6. ՏՆՏԵՍՄԱՀԱՇՎԻ ՄԱՍԻՆ

Պատկերը լրիվ չեր լինի, յեթե յես չշոշափեյի դարձյալ մի նոր պայման: Խոսքը վերաբերում ե արդյունաբերության և ժողովրդական տնտեսության համար կատարվող կուտուկումների, աղբյուրների և այդ կուտակման տեմպերն ուժեղացնելուն:

Ինչի մեջ ե կայանում մեր արդյունաբերության զառացման նոր և առանձնահատուկ կողմը կուտակման տեսակետից: Նրա մեջ, վոր կուտակման հին աղբյուրներն այլևս չեն բավականանում արդյունաբերության հետագա ծավալման համար: Նրանում, վոր անհրաժեշտ ե գտնել կուտակման նոր աղբյուրներ և ուժեղացնել հները, յեթե մենք իսկապես ուղղում ենք պահել և զարգացնել ինդուստրացման բոլշևիկյան տեմպերը:

Կապիտալիստական յերկրների պատմությունից հայտնի յե, վոր յերիտասարգ պետություններից վոչ մեկը, վորը ցանկացել ե ամենաբարձր աստիճանի վրա գնել արդյունաբերությունը, առանց դրսի ոգության յերկարատև վարկերի կամ փոխառությունների չի մնառել:

Յենելով այդ բանից, արևմտյան յերկրների կապիտալիստները կտրականապես մերժեցին մեր յերկրին վարկեր և փոխառություններ տալ, կարծելով, վոր վարկերի և փոխառությունների բացակայությունն անպայման կսանգարի մեր յերկրի ինդուստրացմանը: Կապիտալիստները սխալվեցին, Նրանք հաշվի չառան, վոր մեր յերկիրը կապիտալիստական յերկրներից տարբերվում են նրանով, վոր ունի կուտակման մի քանի առանձին աղբյուրներ, վորոնք բավական են մեր արդյունաբերությունը վերականգնելու և զարգացնելու համար: Մենք իսկապես վոչ միայն վերականգնեցինք արդյունաբերությունը, վոչ միայն վերականգնեցինք գյուղատնտեսությունն ու տրանսպորտը, այլ և մենք կարողացանք ուղարկերի վրա դնել ծանր արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի վերակառուցման հսկայական գործը: Հասկանալի յե, վոր այդ գործի համար ծախսվել են տասնյակ միլիարդ ռուբլիներ: Վերտեղից եյին ստացվում այդ միլիարդները: Թեթև արդյունաբերությունից, գյուղատնտեսությունից և բյուջեային կուտակումից:

Այսպես եր գնում գործը մինչև վերջին ժամանակները: Միանգամայն այլ ե դրությունն այժմ: Յեթե առաջ արդյունաբերության ու տրանսպորտի վերակառուցման համար բավականանում եյին կուտակման աղբյուրները, այժմ դրանք բացեիբաց պակասում են: Այժմ ինդիրն այն չե միայն, վոր վերակառուցենք հին արդյունաբերությունը: Խոսքը վերաբերում ե Ռւբալում, Միքիրում և Կազակստանում

տեխնիկապես զինված նոր արդյունաբերություն ստեղծելուն:

Խոսքը վերաբերում ե նոր, խոշոր գյուղատնտեսական արդյունաբերություն ստեղծելուն Խորհրդացին Միության հացահատիկային, անասնաբուծական և հսմքային ռայններում: Խոսքը վերաբերում ե Խորհրդացին Միության արևելքի և արևմուտքի միջև յերկաթուղային նոր ցանց ստեղծելուն: Հասկանալի յե, վոր կուտակման հին աղբյուրները հերիք չեն այդ հսկայական գործի համար: Սակայն այս չե բոլորը: Սրան պետք ե ավելացնել այն հանգամանքը, վոր գործն անտեսեսավար ձևով տանելու շնորհիվ, տնաեսահաշվի սկզբունքները միանգամայն խախտվեցին մեր մի շարք ձեռնարկներում և տնտեսական կազմակերպություններում: Սա փաստ ե, վոր մի շարք ձեռնարկություններում և տնտեսական կազմակերպություններում վաղուց արդեն յեկամտների և ծախսերի հիմնավորված բալանսներն այլևս չեն կազմում և չեն հաշվում և կալկուլացիայով չեն զբաղվում: Սա փաստ ե, վոր մի շարք ձեռնարկություններում և տնտեսական կազմակերպություններում «ինայողության ռեժիմ», «վոչ արտադրական ծախսերի կրճատում», «արտադրության ռացիոնալացում» հասկացողությունները վաղուց ի վեր մոդայից հանվել են: Ինչպես յերեսում ե, նրանք հույս ունեն, վոր պետքանիք «միենույն ե բաց կթողնի մեզ անհրաժեշտ միջոցներ»:

Սա փաստ ե, վոր վերջերս մի շարք ձեռնարկներում ինքնարժեքն սկսել ե բարձրանալ: Նրանց առաջադրված ե ինքնարժեքն իջեցնել տասը և ավելի

տոկոսով, իսկ նրանք ընդհակառակը, բարձրացնում են: Իսկ ի՞նչ բան ե ինքնարժեքի բարձրացում: Դուք գիտեք, վոր ինքնարժեքի իջեցման ամեն մի տոկոսը մեր արդյունաբերության ներսում նշանակում ե 150 — 200 միլիոն ռուբլու կուտակում: Պարզ ե, վոր այս պայմաններում ինքնարժեքի բարձրացնելն արդյունաբերության և ամբողջ ժողովրդական տնտեսության համար նշանակում ե հարյուր միլիոնավոր ռուբլիներ կորցնել:

Այս բոլորից հետեւում ե, վոր այլ ևս չի կարելի բարձրականանալ միայն թեթև արդյունաբերությամբ, միմիայն բյուջետային կուտակումներով, միմիայն գյուղատնտեսության յեկամուտներով:

Թեթև արդյունաբերությունը կուտակման ամենահարուստ աղբյուրն ե հանդիսանում. այժմ նա ունի հետագա զարգացման բոլոր շանսերը, բայց այդ աղբյուրն անսահման չե: Գյուղատնտեսությունը կուտակման պակաս աղբյուր չե, սակայն այժմ նա ինքը պետության ֆինանսական ոգնության կարիք ունի, իր վերակառուցման ժամանակաշրջանում: Ինչ վերաբերում ե բյուջետային կուտակումներին, դուք ինքներդ գիտեք, վոր այդ կուտակումները չեն կարող լինել անսահման և այդպես չեն լինելու:

Ել ի՞նչ ե մնում: Մնում ե ծանր արդյունաբերությունը: Հետևաբար պետք ե աշխատել, վոր ծանր արդյունաբերությունը և ամենից առաջ նրա մեքենաշինարարական մասը նույնպես կուտակումներ տա: Ուրեմն ուժեղացնելով և ծավալելով կուտակման հին աղբյուրները, հարկավոր ե աշխատել, վոր ծանր արդյունաբերությունը և ամենից առաջ մե-

քենա-շինարարությունը, նույնպես կուտակումներ տա: Սրա մեջ ե յելքը:

Իսկ դրա համար ի՞նչ ե պահանջվում, Վոչչացնել անտեսավարությունը, մոբիլիզացիայի յենթարկել արդյունաբերության ներքին միջոցները, մացնել և ամրացնել մեր ձեռնարկություններում տնտեսհաշվվը, սիստեմատիկորեն իջեցնել ինքնարժեքը, ուժեղացնել ներարդյունաբերական կուտակումներն արդյունաբերության բոլոր բնագավառներում, առանց բացառության: Սա յե յելքի ճանապարհը:

Այսպես ուրեմն, մացնել և ամրացնել տնտեսհաշվվը և բարձրացնել ներարդյունաբերական կուտակումը: Սա յե խնդիրը:

## ՆՈՐ ԶԵՎՈՎ ԱՇԽԱՏԵԼ, ՆՈՐ ԶԵՎՈՎ ՂԵԿԱՎԱՐԵԼ

Սրանք են, ընկերներ, մեր արդյունաբերության զարգացման նոր պայմանները: Այս նոր պայմանների նշանակությունը կայանում ե նրանում, վոր նրանք արդյունաբերության համար ստեղծում են նոր պայմաններ, վորոնք պահանջում են աշխատանքի ղեկավարության նոր ձեվեր:

Ուրեմն:

ա) Այսպիսով հետեւում ե, վոր այլևս չի կարելի հին ձեռվ հույս դնել բանվորական ուժի ինքնահօսի վրա: Վորպեսզի ապահովենք արդյունաբերությունը բանվորական ուժով, հարկավոր ե այդ ուժը հավաքել կազմակերպված կերպով, հարկավոր ե աշխատանքը մեքենայացնել: Յենթադրել, թե մեր աշխատանքի

տեմպերի և արտադրության ծավալի ժամանակ, կարելի յերավականանալ առանց մեքենայացման—դա նշանակում է հույս ունենալ, թե ծովը կարելի յերգալով դատարկել: Այսուհետև հետևում է, վոր այլա չի կարելի հանդուրժել բանվորական ուժի հոսունությունն արդյունաբերության մեջ: Այս չարիքից խուսափելու համար, աշխատավարձը հարկավոր է կազմակերպել նոր ձևով և բանվորների կաղմը ձեռնարկություններում քիչ թե շատ մշտական դարձնել:

բ) Այսուհետև հետևում է, վոր արտադրության մեջ այլա չի կարելի հանդուրժել դիմադրկությունը: Այս չարիքից փրկվելու համար, հարկավոր է աշխատանքը նոր ձևով կազմակերպել, հարկավոր է ուժերն այսպես դասավորել, վորպեսզի բանվորների ամեն մի խմբակ պատասխանատու լինի աշխատանքի, մեխանիզմների, դադայահների և աշխատանքի վորակի համար:

գ) Այսուհետև հետևում է, վոր այլա չի կարելի հին ձևով բավականանալ հին ինժեներա-տեխնիկական ուժերի մինիմումով, վորը մենք ժառանգություն ենք ստացել բուրժուական Ռուսաստանից: Վորպեսզի բարձրացնենք արտադրության այժմյան տեմպերը և ծավալը, հարկավոր է աշխատել վոր բանվոր դասակարգն ունենա իր սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան:

դ) Այսուհետև հետևում է, վոր հին ձևով չի կարելի մի կույտի մեջ թափել հին շկոլայի բողոք մասնագետներին և ինժեներա-տեխնիկական ուժերին, Փոխված պայմանները հաջվի առնելու համար, հարկավոր է փոխել մեր քաղաքականությունը և մաք-

սիմում հոգատարություն ցույց տալ այն մասնագետների և ինժիներա-տեխնիկական ուժերի վերաբերմամբ, վորոնք վորոշակի կերպով դառնում են բանվոր դասակարգի կողմը:

Վերջապես, հետևում է, վոր առաջվա նման չի կարելի բավականանալ կուտակման հին աղբյուրներով: Արդյունաբերության և գյուղատնտեսության հետագա ծավալումն ապահովելու համար, հարկավոր է աշխատել գործի մեջ դնել կուտակման նոր աղբյուրներ, վերացնել անտնտեսավարությունը, մտցնել տնտեսաշխիվը, իջեցնել ինքնարժեքը և բարձրացնել ներարդյունաբերական կուտակումը: Մրանք են արդյունաբերության զարգացման նոր պայմանները, վորոնք պահանջում են աշխատանքի նոր ձևեր և տնտեսական շինարարության ղեկավարության նոր ձևեր:

ի նշ է պահանջվում, վոր ղեկավարությունը կանոնավորենք նոր ձևով: Դրա համար ամենից առաջ պահանջվում է, վոր մեր տնտեսական ղեկավարները հասկանան նոր պայմանները, ուսումնասիրեն արդյունաբերության զարգացման նոր պայմանները կոնկրետ ձևով և վերակազմեն իրենց աշխատանքը նոր պայմանների համեմատ: Այսուհետև դրա համար պահանջվում է, վոր մեր տնտեսական ձեռնարկությունների ղեկավարները հարցին մոտենան վոչ թե «առնասարակ», վոչ «ողից», այլ կոնկրետ ձևով և առարկայորեն, վոր նրանք ամեն մի հարցին մոտենան վոչ թե ընդհանուր դատարկաբանության տեսակետից, այլ խիստ գործնական ձևով, վոր նրանք չսահմանափակվեն թղթի պատասխաններով կամ ընդ-

հանուր Փըազներով և լոգունգներով, այլ մանեն գործի տեխնիկայի մեջ խորասուզվեն գործի մանրամասնությունների մեջ, «մանրունքների մեջ», վորովհետև այժմ մեծ գործերը «մանրերից» են շինուալում: Այնուհետև պահանջվում ե, վոր մեր այժմյան խոշոր միավորները, վորոնք յերբեմն իրենց կազմում ունեն 100—200 ձեռնարկություն, անմիջապես խոշորացվեն և մի քանի համախմբումների բաժանվեն: Հասկանալի յե, վոր հարյուր և ավելի գործարանի հետ գործ ունեցող համախմբման նախագահը չի կարող ինչպես հարկավոր ե ծանոթ լինել այդ գործարաններին, նրանց հնարավորություններին, նրանց աշխատանքին և հասկանալի յե, վոր առանց գիտենալու գործարանները, նա չի կարող զեկավարել:

Ուրեմն, վորպեսզի հնարավորություն տրվի համախմբումների նախագահներին ուսումնասիրել գործարանները ինչպես հարկն ե և զեկավարել, հարկավոր ե նրանց բեռնաթափ անել ավելորդ գործարաններից, հարկավոր ե միավորումները բաժանել մի քանի միավորների, միավորումները մոտեցնել գործարաններին:

Դրա համար պահանջվում ե նաև, վոր մեր միավորումները կոլեգիալ ձեռվ կառավարվելուց անցնեն միավարութայն ձեռն: Այժմ դըություննայնակես ե, վոր միավորումների կոլեգիաներում նստած ե 10—15 մարդ, թղթեր են զբում և դիսկուսիայով զբաղվում: Ընկերներ, այսուհետև արագես կառավարել չի կարելի: Հարկավոր ե վերջ տալ թղթի «զեկավարությանը» և անցնել իսկական գործնական բոլցերիկան աշխատանքի: Միավորման գլխում թող մնա նախա-

գահը և նրա մի քանի տեղակալները: Սա ըստ ամենայնի բավական ե միավորությունները կառավարելու համար: Կոլեգիայի մյուս անդամներին ավելի լավ կը լիներ իջեցնել գործարանները և ֆաբրիկաները: Սա նրանց համար շատ ավելի ոգտակար կլինի:

Այնուհետև պահանջվում ե, վոր միավորների նախագահները և նրանց տեղակալներն ավելի հաճախ շընեն գործարանները, ավելի յերկար մնան այնտեղ աշխատանքի համար, ավելի ծանոթանան գործարանային աշխատանքներին և վոչ միայն սովորեցնեն տեղական մարդկանց, այլև նրանցից սովորեն: Թյուրիմացություն ե կարծել, թե այժմ կարելի յե ղեկավարել գրասենյակից, գործարաններից հեռու գրասենյակում նստած: Գործարանները զեկավարելու համար հարկավոր ե ավելի հաճախ հանդիպել ձեռնարկությունների աշխատավորներին, հարկավոր ե կենդանի կապ պահպանել նրանց հետ:

Վերջապես, յերկու խոսք 1931 թ. մեր արտադրական պլանի մասին:

Գոյություն ունեն վորոշ մերձկուսակցական որիվատեխներ, վորոնք հավատացնում են, թե մեր արտադրական ծրագիրն իրական չե, անիրագործելի յե: սա Նշեդրինի «իմաստուն պիսկարների» նման ե, վորոնք միշտ պատրաստ են տարածելու իրենց շուրջը դատարկ մտքեր:

Իրակմն ե արդյոք մեր արտադրական ծրագիրը: Անպայման այս իրական ե: Թեկուզ հենց այն պատճառով, վոր այդ ծրագրի գոյության համար կան բոլոր անհրաժեշտ պայմանները: Այդ ծրագիրը իրական ե, թեկուզ հենց այն պատճառով, վոր

նրա կատարումն այժմ կախված է բացառապես մեղանից, մեր շնորհքից և մեր ցանկությունից՝ ոգտագործելու մեջ մոտ յեղած հարուստ հնարավորությունները:

Ուրիշ ել ինչով բացարձել այն փաստը, վոր միշտը ձեռնարկություններ և արդյունաբերական ճյուղերը արդեն գերակատարել են պլանը: Հիմարություն կլինիկ կարծել, թե արտադրական պլանը թվերի և առաջադրությունների ցանկն եւ, իսկականում արտադրական պլանը միլիոնավոր մարդկանց կենդանի գործնական աշխատանքն եւ: Մեր արտադրական պլանի իրական լինելը—դա միլիոնավոր աշխատավորներն են, վորոնք նոր կյանք են կերտում: Մեր ծրագրի իրական լինելը—դա մենք և դուք ենք, մեր կամքն ե, վոր ուզում ե աշխատել, մեր պատրաստակամությունը՝ աշխատելու նոր ձևով, մեր վճռականությունը՝ կատարելու պլանը:

Մեզ մոտ կա արդյոք այդ վճռականությունը: Այս, կա: Ուրեմն մեր արտադրական ծրագիրը կարող եւ պետք ե իրագործվի: (Յերկարաւել ծափանակություններ):



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանվորական ուժը . . . . .	b2
Բանվորների աշխատավարձը . . . . .	2
Աշխատանքի կազմակերպումը . . . . .	6
Բանվոր դասակարգի արտադրական-տեխնիկական ինստիտուտների հարցը . . . . .	12
Երջադարձի նշանները հին տեխնիկական ինստիտուտների մեջ . . . . .	18
Տնտեսահաշվի մասին . . . . .	23
Նոր ձևով աշխատել, նոր ձևով դեկավարել . . . . .	28
	33

31. Թաստանջյան.—Համատարած կողմէկիվացման տվյալառամը և 1931 թ. գարնանացանի կամպանիայի խնդիրները . . . . . 10 »
32. Կասիխով.—Բոլշեկիւյան յերկրորդ դարնան մարտական խնդիրները . . . . . 5 »
33. Վասկանյան—1931 թ. գարնանացանի կամպանիայի գործական խնդիրները . . . . . 5 »
34. Նոր կենցաղի յիւզեր . . . . . 20 »
35. Առօս Լուսնց.—Բանաստեղծություններ . . . . . 20 »
36. Լ. Զաօչարին.—Հացահատիկի ֆաբրիկա («Դիզան» սովորզի մասին) . . . . . 10 «
37. Ա. Ա., Անդրեյսվ.—Կուլտուրական շինարարության խնդիրները . . . . . 7 »
38. Պ. Յալցին.—Գալլերի վոճակը, պիեսա 3 գոր . . . . . 25 »
39. Վ. Ֆուլյան.—Համբուլում (ը) ԿԿ և ԿՊՀ 1930 թ. դեկտեմբերին արդյունքները . . . . . 5 »
40. Գյուղատնտեսն Ա. Վասկանյան—Գյուղատնտեսության մասաւատուները Հյուսիսային Կովկասում և նրանց դեմ կովելու գիւտավոր միջոցները . . . . . 15 »
41. Ռ. Վիխման.—Միլիոնները վառքի հանենք բյուրոկրատիզմի դեմ պարաբռու . . . . . 15 »
42. Ա. Յովիլսվ—Կոլխոզային շինարարության մասին . . . . . 15 »
43. Ս. Եպօտեյն.—Կոլխոզը լեռներում . . . . . 10 »
44. Յ. Յլյուտին—Կոլխոզային շարժումը և պայքարը կրոնի դեմ 15 »
45. Ա. Մ. Մայցին—Բներքանակարգման մեքնաների ստուգումն և խնամքը . . . . . 12 »
46. Մ. Դիգոյան—Կաղմակերպենք բներքանակարգը . . . . . 8 »
47. Պ. Պիտակով—Ընդզեմ խեղաթյուրումները և խոսորումների կոլխոզշնարարության տապարիզում . . . . . 15 »
48. Պրոյետարական փորձը դեպի կոլխոզային դաշտերը . . . . . 12 »
49. Պ. Սաալին—Նոր պայմաններ—տնտեսական շինարարության նոր խնդիրներ . . . . . 12 »

## ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՑԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍԱ,ԵՆ

1. Հյուս. Կովկ. հայկ. պրոլետքորդների ասսոցիացիալի անդամների գըր-վածքները
2. 16-րդ կուսամագումարի արդյունքները
3. Հյուսիսային Կովկասի հնդամակը—արդյունքնաբերությունն:
4. Խոզաբարության կազմակերպումը կոլխոզում:
5. Կերի հարցը և սիլոսացումը:
6. Կենդանաբուծության ավալ բանվորների պարտականությունները:
7. Ջեռնարկ ծխախոտագործության համար:
8. Ճագարարությունն:
9. Թանաբարությունն:
10. Աշխատանքի կազմակերպումը յեվ յեկամուտների բաժանումը կոլխոզում. Լավագույն կոլխոզների փորձը Հյուս. Կովկասում:
11. Տրանսպորտը և կարիչը. տեխնիկական ձեռնարկի:
12. Կոլխոզը և կուսակցության խնդիրները:
- Դիմել՝ Ռостով հ-Դ Բуденовский пр., 60, Կрайнациզդատ.

2013

ՀՀ Ազգային գրադարան



166 NL0034525

24  
ГА 32-И  
108

ԳՐԵՑ Ե 12 ԿՈՎ.

ռ. ո. 1.0



на армянском языке

# Новая обстановка, новые задачи хозяйственного строительства

Речь тов. Сталина на совещании  
хозяйственников

Сев.-Кав. кр. отд. ЦЕНТР. ИЗДАТ. народов СССР.  
«КРАЙНА ЦИ ЗДАТ»